«Իմացի՛ր թվային միջավայրում քո իրավունքների մասին»

Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղեցույց

Ներկայացվում է մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների համար



www.coe.int/children

Կառուցում ենք Եվրոպա՝
երեխաների հետ և
երեխաների համար

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE



Ո՞վ է պատրաստել այս ուղեցույցը և ինչու՞

Եվրոպայի խորհուրդը Եվրոպայի **46** երկրներից բաղկացած խումբ է, որոնք աշխատում են միասին հանուն խաղաղության և մարդու իրավունքների:

Այն օգնում է Եվրոպայի երկրներին պաշտպանել **երեխաների իրավունքները՝ քո՛ իրավունքները*:**

Դա ներառում է նաև քո իրավունքները **թվային միջավայրում*:**

Եվրոպայի խորհրդի ցանկությունն է, որ մեծահասակները և երեխաները հասկանան, թե ինչ է անհրաժեշտ անել, որպեսզի թվային միջավայրում երեխաները կարողանան օգտվել իրենց իրավունքներից:

Երեխաների իրավունքները պետությունների տված խոստումներն են երեխաներին՝ օգնելու նրանց ապրել բարեկեցիկ կյանքով:

Թվային միջավայր նշանակում է երեխաների կողմից համակարգիչների և ինտերնետի օգտագործման բոլոր միջոցները՝ սմարթֆոններ և պլանշետներ, համակարգչային խաղեր և սոցիալական մեդիա:

Ի՞նչ կարևոր կետեր պետք է հաշվի առնել երեխաների իրավունքների պաշտպանության ժամանակ

Կա 5 բան, որոնք միշտ կարևոր են, և որոնք պետք է հարգի յուրաքանչյուր ոք, ով որոշում է կայացնում քո և այլ երեխաների համար: Դրանք են՝





1. **Երեխաների լավագույն շահերը*** – ամենակարևոր գործոններից մեկն է, որը պետք է մտապահել որոշումներ կայացնելիս կամ քայլեր ձեռնարկելիս։
2. **Երեխաները փոխվում են ծնվելուց մինչև 18 տարեկան դառնալը:** Դեռահասները և մանուկներն ունեն տարբեր կարողություններ և կարիքներ։
3. **Երեխաներին չպետք է այլ կերպ վերաբերվել առանց հիմնավոր պատճառի:**
4. **Երեխաների կարծիքը պետք է լսել և լուրջ ընդունել:**
5. Պետությունները* պետք է **խրախուսեն, աջակցեն և համագործակցեն այլոց հետ** (գործարարների, ուսուցիչների, ծնողների և երեխաների)՝ երեխաների իրավունքները պաշտպանելու նպատակով։

«Երեխաների լավագույն շահերը» նշանակում է, որ որոշում կայացնելիս երեխայի բարեկեցությունը պետք է լինի առաջնահերթ։

Պետությունները պետք է աջակցեն երեխաներին ազգային, տարածքային և տեղական կառավարման մարմինների և դրանց հետ կապված կազմակերպությունների միջոցով։

Քո ո՞ր իրավունքները պետք է պաշտպանված լինեն և ինչու՞

Բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան օգտվել թվային միջավայրից:

Այն պետք է՝

- Լինի մատչելի (իսկ հնարավորության դեպքում լինի անվճար հանրային վայրերում)։
- Նաև հասանելի լինի յուրաքանչյուրի համար, ով ունի հաշմանդամություն, ապրում է գյուղական վայրում կամ ներգաղթյալ է։







Տեղեկություններ ստանալու քո իրավունքը

- Պետությունը պետք է ապահովի, որ դու հեշտությամբ օգտվես երեխաների համար նախատեսված որակյալ տեղեկություններից։
- Դու պետք է իմանաս՝ ինչպես հարգել մյուսներին առցանց հարթակում (օրինակ՝ չխրախուսել բուլինգ կամ բռնություն)։
- Բիզնես կառույցները պետք է տեղեկություններ տրամադրեն օգտվելու պայմանների վերաբերյալ, որոնք դու կարող ես գտնել և հասկանալ։

Որոշումների կայացմանը մասնակցելու քո իրավունքը

- Դպրոցները, պետությունը, բիզնես կառույցները և միջազգային կազմակերպությունները պետք է հարցնեն քո կարծիքը և լուրջ վերաբերվեն դրան։





Առցանց խմբեր ստեղծելու և դրանց միանալու քո իրավունքը

- Պետությունը կամ այլոք չպետք է հետևեն քեզ համացանցում՝ բացառությամբ օրենքով թույլատրվող դեպքերի։

Խաղալու քո իրավունքը

- Պետությունը և բիզնես կառույցները պետք է աջակցեն քեզ խաղալու, ստեղծագործ լինելու, խնդիրներ լուծելու և այլ երեխաների հետ միասին աշխատելու հարցում։

Անձնական կյանքի և անձնական տվյալների* պաշտպանության քո իրավունքը

- Յուրաքանչյուր ոք պետք է իմանա անձնական կյանքի գաղտնիության քո իրավունքի մասին։
- Դու պետք է սովորես՝ ինչպես քո անձնական տվյալները գաղտնի պահել առցանց։
- Քո անձնական տվյալները պետք է օգտագործվեն միայն քո թույլտվությամբ (կամ եթե դու շատ փոքր ես, ծնողներիդ թույլտվությամբ) և երբ դա օրինական է։
- Դու պետք է կարողանաս հասկանալ, թե ինչպես են օգտագործվում քո անձնական տվյալները և ինչպես կարող ես ջնջել դրանք կամ ուղղել սխալները։
- Խաղալիքներում կամ հագուստի մեջ առկա սմարթ սարքերը չպետք է օգտագործվեն քո մասին տեղեկություններ հավաքելու նպատակով։

Անձնական տվյալներ նշանակում է քո անունը, տարիքը, որտեղ ես բնակվում և որտեղ ես գտնվում։

Կրթության քո իրավունքը

- Դպրոցները պետք է հագեցած լինեն քեզ համար անհրաժեշտ թվային տեխնոլոգիաներով։
- Դու պետք է սերտես քեզ համար անհրաժեշտ հմտությունները։ Այդ նպատակով աջակցություն ստանալը հատկապես կարևոր է, եթե դու աղջիկ ես, քո ընտանիքը կարիքավոր է կամ ունես հաշմանդամություն։


Վնասից* պաշտպանվելու քո իրավունքը

- Կան տարիքային սահմանափակումների վերաբերյալ ստուգումներ։
- Դու և քո ծնողներն իրազեկ եք բուլինգի, վնասակար բովանդակության և անծանոթ վտանգի մասին։
- Դու պետք է կարողանաս հեշտությամբ տեղեկացնել պատշաճ մարմիններին վնասակար բովանդակության կամ վարքագծի մասին։
- Երեխայի սեռական չարաշահման վերաբերյալ առցանց նյութերի տարածումը պետք է կանխարգելվի։

Վնասները ներառում են՝ բուլինգը, հանցագործություն կատարելուն հակելը, սեքսիզմի, ռասայական խտրականության, ինքնասպանության կամ ինքնավնասման խրախուսումը, դրամախաղերը, սեռական չարաշահումը, ինչպես նաև համակարգիչների, պլանշետների կամ սմարթֆոնների չափից ավելի օգտագործումը, որը բերում է քնի խանգարման կամ վտանգում է առողջությունը։

Ի՞նչ է անհրաժեշտ պետություններին և այլոց՝ ապահովելու քո իրավունքները թվային միջավայրում:

- Մշակել թվային միջավայրում քո իրավունքները պաշտպանող **օրենքներ և քաղաքականություն:**
- Ապահովել **բոլորի միասնական աշխատանքը**:
- **Իրազեկել և խրախուսել** բոլոր նրանց, ովքեր աշխատում են երեխաների հետ, հասկանալ և հնարավորինս ամեն ինչ անել, որպեսզի թվային միջավայրում դու կարողանաս օգտվել քո իրավունքներից:
- Ապահովել, որ թվային միջավայրը հասանելի լինի ձեր բոլորի համար:



Պաշտպանության միջոցները ներառում են՝ ներողության հայցում, վնասակար բովանդակության հեռացում, պնդումներ, սխալ տեղեկության ուղղում:

- Իրականացնել **հետազոտություն՝** հասկանալու, թե ինչպես կարող ես օգուտ քաղել թվային միջավայրից և պաշտպանված լինել վնասներից:
- **Բողոքներ և պաշտպանության միջոցներ*:** Պետությունները պետք է ապահովեն, որ երբ քո իրավունքները չեն հարգվում, դու և քո ծնողները կարող եք բողոքել այնպիսի ձևերով, որոնք դյուրըմբռնելի են և կիրառելի:



© Եվրոպայի խորհուրդ, մայիս 2020

Դասավորությունը եւ նկարազարդումը ՝ Andy Matthew, the Port Creative, Edinburgh (Մեծ Բրիտանիա)

Տվյալ փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրությանը կամ թարգմանությանը վերաբերող բոլոր հարցումները պետք է ուղարկվեն Հաղորդակցության Տնօրինություն (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int).

Այս հրապարակումը թվային միջավայրում երեխայի իրավունքների պաշտպանմանն ու հարգմանն ուղղված ուղեցույցի Եվ անդամ երկրների նախարարաների կոմիտեի հանձնարարականի երեխայակենտրոն տարբերակն է:

Հրապարակումը թարգմանվել է Եվրոպայի խորհրդի մանկական առցանց սեռական շահագործումը և դաժան վերաբերմունքը Եվրոպայում կանխելու ծրագրի (EndOCSEA@ Europe) կողմից՝ Վերջ Բռնությանը հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:



Բացահայտիր ուղեցույցը և իմացիր քո իրավունքները թվային միջավայրում.

Եվրոպայի Խորհրդի գործողությունների մասին երեխաների իրավունքների ոլորտում ավելին իմանալու համար տես:
www.coe.int/children

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել պրոֆեսոր Լաուրա Լանդիին և դոկտոր Միշել Թեմփլթոնին (Բելֆաստի համալսարան, Մեծ Բրիտանիա), ովքեր օգնեցին մեզ պատրաստել Եվրոպայի խորհրդի երեխայակենտրոն ուղեցույցի այս տարբերակը, ինչպես նաեւ Bremore Educate Together (Դուբլին, Իռլանդիա) միջնակարգ դպրոցի աշակերտներին՝ Շեմսեդին, Մարգարիտային, Ալիին, Ամելիային, Լայամին, Բրայթին, Նեյլասին և Չարլիին, ովքեր մասնակցել են տեքստի մշակմանը:

QUEEN'S UNIVERSITY BELFAST

CENTRE FOR CHILDREN'S RIGHTS

HYE

Եվրոպայի խորհուրդը 46 երկրներից բաղկացած եվրոպական կազմակերպություն է, որը գտնվում է Ստրասբուրգում (Ֆրանսիա): Այն ստեղծվել է, որպեսզի բոլոր անդամ երկրները պաշտպանեն մարդու իրավունքները, այդ թվում երեխաների իրավունքները, կանխելով նրանց նկատմամբ կիրառվող բռնության բոլոր տեսակները, և աջակցեն երեխաների լիարժեք զարգացմանը:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE